

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

8-9 1899

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعة علوم

ԽՄԲԱԳՐԱԳԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈԼԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 48

1899 ՓԵՏՐՈՒԱՐ 20

Ամեն տեղի համար Տարեկան կանխիկ 50 դահեկան, վեցամսեայ 26, իսկ եռամսեայ, 13 դահեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 ֆրան: Թղթասարի ծախքը եմբագրութեան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի 100 դրուի տեղ 105 դրուի:

ԲՈԼԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ԱՐԱՔԱՍ. — Կանանց Բաժինը Առ Օր. Ս. Զարուհի:

ՄԻՋՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ. — Տոբթ. Ի. Թիւճեանի «Առաջնորդ Առողջապահութեան»:

Ղ. ԲՈԼԱՏ. — Ճարտարարուեստական. Ներկարարութիւնը: Մետաքս:

ՄԱՏԱԹ. — Բժշկական նոթեր:

ՍԱՐԳՍԻ Յ. ՊՕՂԻԿԵԱՆ. — Տեղագրական. Մոռցուած դիւղ մը:

Ղ. ԲՈԼԱՏ. — Շերամաբուժական հարցեր:

Ղ. ԲՈԼԱՏ. — Արհեստական. Նիքելազոծում:

ՀԱՅԿ ԹԱՅՔԷՍԷՆԵԱՆ. — Աշխարհիկ կեանքէն:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. — Իտէալը. — Կարելի՞ է երիտասարդանալ:

ԱՐԱՔԱՍ. — Խոհանոցի Բաժինը:

Գ. Մ. ԷՕԼՄԷՋԵԱՆ. — Գիտական ինդիւրներ:

Հանելուկ — Թղթակցութիւն, Ազդեւուն:

Հատը 40 փարայ

ՏՊԱԳՐ. ԳՐԻԳՈՐ Պ. ԳԱՅՍԷՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապ. Ալի Ճատտէսի, Թիւ 44

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր

ԽՆԴԻՐ ԻԹ.

Մէկը կ'ուզէ գիտնալ թէ՛ 10 տարի ետքը 200 ոսկի ստանալու համար, ամէն ամիս ի՞նչ հաստատ դրամագլուխ մը յանձնելու է դրամատան մը, որ տարին հարիւրին 12էն, 10 տարի ետքը իրենց բազմապատկուած հանդերձ բազմապատկած 200 ոսկին ձեռք բերէ: (Պէտք է ամէն ամիս հաշուել բազմապատկուած տոկոսը):

Գ. Մ. ԷՕԼՄԵՋԵԱՆ

Ագ-Հիսար

ԼՈՒԾՈՒՄ ԹԻԻ 26 ՀԱՆՆԵԼՈՒԿԻ

Ս	Ո	Վ
Կ	Լ	Ո
Ք	Ս	Լ
Մ	Ե	Կ
Ն	Մ	Ա

Ի Վ Ի Գ Ա Կ Մ Ն Ն Կ

Լ	Լ	Է
Ս	Ի	Ի
Թ	Ր	Ն
Ս	Ս	Լ
Ն	Ա	Ի

Ուտեմ.—Վոյկա.—Կոնսակ.—Իւնիէ.—
Ապրիլ.—Նաթալ.—Իվիցա.— Ակբան:—

Որով բառերու սկզբնատառերը կարդալով կ'ունենանք «Ովկիանիա» (աշխարհի հինգ մասերէն մէկը) և վերջի տառերը կարդալով՝ «Մակէլան» Փորթուկալցի անուանի նաւարկուի մը անունը):

Լուծած են Այտընէն Օր. Զապէլ Եսպըճեան.—Նիկոմիդիայէն.— Օր. Էօթէնի Յ. Նշանեան. Օր. Մաքրուհի Ղազարոսեան և Տկն. Ազնիւ Գ. Քիւրտեան.— Էրզրումէն Պ. Սուրէն Յ. Ուզունեան, աշակերտ Սանառեան վարժարանի.— Կէյվէ Օրթոգիւղէն Պ. Մինաս Յ. Փորթուգալեան.— Գարթալէն Պ. Ե. Յ. Էթմէքճեան.— Պէրպլերեան վարժարանի աշակերտներէն Յակոբ Ս. Գալֆաեան.— Պոլսէն Պրնյք. Շաւարշ Միսաքեան, և Յովհ. Խ. Տօնէյեան:

Իսկ ամենէն աւելի նշանակութեան արժանի լուծումը կատարած է այս անգամ, Գառնիքիւղէն Օր. Նուարդ Զարեքճեան, զոր կը հրատարակենք ստորեւ.

ԼՈՒԾՈՒՄ ՈՏԱՆԱԻՈՐՈՎ

Ովկիանիան է մասն աշխարհի,

Որ գայ տըկար գրչիս խոնարհի.
Բայց տեա՛ր Բոլատ էֆէնտի.
Զիս վարձատրելու զիջանիք պիտի:

Մակէլան անուանի նաւարկու
Հին ատեն ծովային խուզարկու
Էր, քաջասիրտ, ազգաւ Փորթուկէզ,
Ահագին հողմն ըրաւ երկու կէս:

Կոչեց զայն նեղուց Մակէլանի,
Այլ, վաղիւ իսկեց Սպանիա զանի.
Սանկ նանկ մահն ալ եկաւ դառնագին
Գրկեց, տարաւ նաւորդին հոգին:

ՆՈՒԱՐԴ ԶՊՈՒԲՃԵԱՆ

Թ Ղ Ք Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

2. Գարթալ.—Ե. Յ. Էթմէքճեան էֆ.—
Բաժանորդ արձանագրած ենք Վարդերես էֆ. և դրամը գանձած՝ ձեր ակնարկած ձեռքերուն վրայ պիտի գրուի:

1.—Ատարազար.—Ստեփան էֆ. Սաիրիչեան.—Ստացած ենք ձեր նամակը, որով Ատարազար կը հրաւիրէիք զմեզ՝ «Գուրուտանի» մասին պէտք եղած ուսումնաւարտութիւնները կրտարելու: Զեր հրաւերը հաճութեամբ կ'ընդունինք. մանրամասնութիւնները նամակով:

Երուանդ. Էֆ. Տէրադէրետնի հասցէին երկրորդ անգամ ըլլալով զրկած ենք 1էն մինչեւ 26 թիւը. վերջի տաքումնիս՝ Երուանդ էֆ. Փախաղեան հասցէով է ըստ իւր ազգարարութեան. կ'երեւի թէ՛ թղթատունէն ուրիշ մէկը իր հասցէով կ'երթայ թերթերը կ'առնէ. պէտք է հոն՝ թղթատունը շնորհակալութեամբ հաղորդուի իր հասցէին:

3.—Վենետիկ.—Վեր. Հ. Ս. Երամեան.—
Շնորհակալութեամբ ստացած ենք ձեր գիրը, որու պատասխանը զրկուած էր արդէն մէկ քանի օր առաջ: Հաճեցէք՝ Բազմապլսի վերջացած տարւոյ դեկտեմբեր թիւը զրկել, զոր չենք ստացած:

4.—Զիլէ.—Միսաք էֆ. Ներսէսեան.—
Ըստ ձեր գրութեան թերթ կը զրկենք. կ'ստանաք նուազ ամիս:

Խօսուանի.—Մէկ թիւէն մինչեւ 40 զըրկուեցան. ձեր գրութեան մէջ ակնարկած դրամնիւղ չենք ստացած տակաւին. մասնաւոր նամակ կ'ստանաք:

ՀԱՆՐԱՓԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՊՐԱԳՐԱՊԵՏ - ՏԵՕՐԷՆ

Գ. ԲՈՒԱՑ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻՐ 48

1899 ՓԵՏՐՈՒԱՐ 20

ԿԱՆԱՆՑ ԲԱԺԻՆԸ

ԱՌ. ՕՐԻՈՐԻ Ս. ԶԱՐՈՒՀԻ

Ամէն անգամ որ Բիւզանդիոնը ձեռքս կառնեմ, փութկոտ հետաքրքրութեամբ մը կը փնտռեմ «Կանոնաց Բաժինը»։ Երբ գտնեմ՝ հրճուանքով կը լափեմ անոր տողերը, որոնց մէջ կը պատկերէր մեր տղեղ բարբերը այնքան քաղցրութեամբ՝ և այնքան համոզիկեր փատաբարով։ Եւ կանաչի փափկութեամբ մը, առանց ընթերցողին զգացնել տալու, կը ջանաք առաջնորդ մ'ըլլա՛ն ձեր գրչի ծայրով միջոցներ ցոյց տալով անոնց, միջոցներ՝ սրանք այնքան օգտաշատ են, և զնորդանալու ու յառաջդիմելու նպատակադարմար։ Դէկ բառով Հայ կիներ բարձրացնել և սղնուացնել կը ձգտէր։

* * *

Բիւզանդիոնի 704 թիւը ձեռքս առած տառն, տկնարկս մագնիտացաւ «Կանոնաց Լսարաններ» խորագրին վրայ։ Երկար տառն դիտեցի այդ խորագիրը, ու

կը մտածէի, ունենալ լսարաններ՝ ուր հայ կիներ պիտի սովորի իր ճաշակները կրթել, պիտի սովորի առողջապահիկ ըլլալ՝ փափկանկատ, պարկեշտ, անաշէն, ընտանեակէր, ևլն. ևլն»։ Բայց սկեպտիկ թերեհաւատութիւն մ'ունեցայ անոր իրականացումին վրայ երազած տառնաւ. և կ'ըսէի, գաղափարը սրչափ սղջափառ, առաջարկը սրչափ շահեկան, գործադրութիւնը՝ չըսեմ անկարելի, այնչափ՝ և ունելի թերիս, դժուարագոյն, քանի որ նախաձեռնարկ մարմիններ կը պակսին, և կամ որ նոյնն է՝ «կամք»ը, քանի որ ամէն անգամ այդպիսի առաջարկներ անլսելի մնալու կը գատապարտուին։

Ձեր այդ առաջարկի մէջ պարբերութիւն մը սովորյալ աւելի ուշո գլուխդ, որու մասին պզտիկ դիտապութիւն մը ընելու պիտի թոյլատրէր անշուշտ։

Կ'ըսէր թէ «գաւառացի աղջկանց տալ այն դաստիարակութիւն և կրթութիւն՝ զոր կուտանք պարսկացի աղջկան՝ կը նշանակէ չարաչար դժբաղդ ընել զանոնք», ու կ'աւելցնէր, «բայց պէտք եղածը սովորեցնել անոնց, անթերի ու լաւ տան-

տիկիներ, խնամատու ու բարի մայրերը՝ ներ զայնս՝ մեր մեծ ջանքը պէտք է ըլլայ ելն»։ Չէ՞ք ուզեր ինձ հետ մէկտեղ ըսել, Օրիս'րգ, թէ՛ երբ կ'ենը անթերի ու լաւ ասնաթիկին մը դառնայ, խնամատու ու բարի մայր մ'ըլլայ, արդէն ըստ բաւականի դատարարականա՞ծ և զարգացած կ'ըլլայ. և այդ վիճակին մէջ այլեւս չը պիտի ուզէ իր անդրջնդեղեղեղ տարազով երեւիլ հասարակութեան. իր ճաշակը պիտի նրբանայ այն տառն ամէն բանի մէջ, եւ մասնաւորապէս իր հագուստի ու կապուստի մասին՝ պիտի ջանայ աւելի նրբաճաշակ ըլլալ։ Նոյն իսկ այսօր, ո՛չ ասպարէն դաւառացի՝ և մինչև իսկ գեղջուկ կ'ինն անգամ կը ձգար միշտ նորութիւն մը՝ ըլլայ գոյնի, ձևի կամ տեսակի. դնել իր աւանդական տարազին վրայ։ Գեղեցկին ճաշակը, այդ մարդէն աւելի՛ կնոջ մէջ բնածին յատկութիւն մ'է, զոր կարելի չէ մահացնել. և մեր ջանքը ըլլայու է այդ ճաշակը կրթել, աղնաւացնել, և այս կերպով ահա հայ կինը իր դիւրին մէջ բարձրացնել։ Չեր ներշնչել փորձած գաղափարն այ այս չէ՞ արդէն։

Եւ ինչո՞ւ հակառակը, ինչո՞ւ այդ կերթ ճաշակները միայն պոստեցի կնոջ վերապահել ուզենք, ինչո՞ւ այս տարբերութիւնը մեր և անոնց մէջ։ Ասիկա կը նշանակէ հոտանքին գէժ պատուար կանգնելու ջանալ։ Պճնասիրութիւնը իր այլանդակ կողմերով մաւա գտած է արդէն շատ մը գաւառներու մէջ. հոն աւելի պճնամոլութիւնն է որ կը յառաջդիմէ, քան վայելուչ նորաձեւութիւնը՝ տկնարկութիւնն անշուշտ ներքին գաւառներու համար չըլլալը կը հասկցուի։

Եւ քանի որ հեղհեղեղ գաւառներու մէջ, նորաձեւութեան հետեւողներ կը շատնան, աւելի աղէկ չըլլար որ, աշխատինք հասկցնել իրենց թէ՛ լաւ հագուելու համար պէտք չէ շուայթթէն ծախսել կամ պճնամոլ ըլլալ։ Բայց ասիկա հասկցնելու համար հարկ է արդեօք դա-

ւառները երթալ. նոյն իսկ Պոլսոյ մէջ այն տեսակ այլանդակ հագուստներ կը հագնին, որ անսնդին ծիծաղը կը շարժէ (նպատակս չաւանդողները հարուածել չէ, կան այնպիսի կիներ, որոնք դիտեն վայելուչ կերպով հագուել, սակայն, առ ի չդոյն դրամի, գտածին կը հագնին. տոտնք մեղադրելի չեն)։ Տեսէք օրինակ մը։ Ծանոթներէս հայ աղջիկ մը, նորաձեւութեան Փրանսերէն թերթի մը մէջ կը տեսնէ երեկոյթի յատուկ հագուստ մը և կը հաւնի. որովհետեւ այն գերձակահին՝ որու կարել տուաւ, իրմէ աւելի չէր հասկնար, եւ կամ չարութեամբ թերեւս, ժապաւէն և ժանեակ վրան աւելցնելով կը կարէ չըրջազգեստը, և մեր օրիորդը կատարեալ գոհունակութեամբ փողոց կ'ելլէ իր այդ տարազով շրջադայելու... Եւ տակաւին ինչե՞ր կան. որոնք մի առ մի թուել հոտանոցի և աւելորդ պիտի ըլլայ։ Ճիշդ այս տարօրինակութեանց առաջը առնել փորձելու համար՝ և հայ իգական սեռին աւելի օգտակար ծառայութիւն մը մատուցանելու նպատակով, Հանրագիտակ կը ջանայ վայելչազարդութեան Բաժին մ'ալ աւելցնել իր պարունակութեանց շարքին վրայ, որու կէտ նպատակին պիտի ըլլայ՝ 1. վայելչօրէն հագուել սովորեցնել. 2. Արհեստաւոր դասակարգին աւելի դիւրութիւն մ'ընծայել և 3. Կանացի ձեռարուեստներու և զբաղումներու վրայ խօսիլ. և այս պիտի ըլլայ անշուշտ՝ եթէ Ժողովուրդը իր օգուտը ճանչնալով՝ իր քաջալերութիւնը փութացնէ։ Չէ՞ք յուսար որ թերթերն ալ ըսարաններու չափ բարեգործ ազգեցութիւն մ'ընեն ժողովուրդին վրայ. քաջալերենք ուրեմն զանոնք՝ եթէ այդպէս է։

ԱՐԱՔՍ

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ

ՓԻՆՈՊԱՌԻԹԻՆ

ՀԱՏՈՐ 20րդ

Աշխատասիրեաց

ՏԲԴ. ՄԱՆՈՒԷԼ Բ. Յ. ԻԻԹԻԻՃԵԱՆ

«Կեանքը մեզ տրուած է իրեն աւանդ,
«գայն ամէն կերպով խնամելու և պահպանելու»
«նկու պարտաւոր ենք: Համարելինք որ՝ փո-
«խանակ հիւանդանալով բժիշկի դիմելու,
«սէտք է առողջապահիկ օրինաց համեմատ
«տարիւ և բժիշկի կարօտ չբլաւ: Յաւը էջ 3.»

Որո՞ւ գրելէն ելեր են այս մարգարտա-
շար տղերքը, ո՞վ կ'ուզէ հաւանիլ թէ՛ զա-
նոնք գրողը արհեստիւ բժիշկ է: Բայց Տօք.
Ի. Թիւճեանի Առողջապահութեան Յառաջա-
բանին մէկ մասն է գոր կ'արտատպենք:

Ընթերցողներէ տմանց չըթուենքներուն
վրայ թերահաւատութեան թեթեւ ժպիտ մը
կը նկատուի, այնպէս չէ՞. «Կոյ՛ մի, ձեռ-
քերնին հիւանդ սուէք որ հաւու պէս փետ-
տեն» կ'ըսեն նեղարտելով:

Բայց անշահախնդիր բժիշկներ ալ, փա՛ռք
Աստուծոյ, դեռ շատ կան. և ներեցէք մեզ
պնդել որ Տօք. Ի. Թիւճեան անոնց կարգէն
է և իր խօսքն ու գործքը զոյգ կ'ընթանան:
Տեսէ՛ք. իր գինովութեան դէմ գրած տետ-
րակով մէկ ձեռքը ժողովրդեան վէրքին վը-
րայ կը դնէ, իսկ միւս ձեռքով այս Առող-
ջապահութեան գայանալիք հասցիքը Աղքա-
տանամոր մը (Կէտիկ Բաշայի) կ'առատա-
ձեռնէ:

Ուրեմն ինչո՞ւ վարմանանք որ անկեղծ
յայտարարութիւն մը գիտցիր է զետեղել իր
յառաջարկին մէջ: Այո՛, «բժիշկի կարօտ
մի ըլլաք», և վտահ լլլանք թէ ինքը հիւանդէ
կուշտ և առողջի կարօտ է, ինքը տեղա-
կալ գնդապետի, բժիշկի կայսերական պալա-
տանց և Կիւմիւշ Սուլի արքունի հիւանդա-
նոցին, տէր և հրատարակիչն է Սըհաթ ա-
ռողջապահական լրագրոյ:

Շատ փառքի ալ ցանկացող չէ. իր նա-
խորդ փառաւոր և շահարկեր ամուրաներուն
վրայ կրնայ աւելցնել անդամ Գաղղիայ, Անգ-
լիոյ, Ռուսիոյ, Իտալիոյ, Սպանիոյ, Պելճի-
գայի, Ամերիկայի, Պրազիլիոյ Առողջապահա-
կան ընկերութեանց:

Ինքը բառին բովանդակ նշանակութեամբ
պահեստին սիրահար մըն է, և հիմա իր վար-
ձատրութիւնը կը սկսէ զայն ընդհանրա-
ցնել: Ահա 1863ին սկսեալ այս 36 տարի է
որ միշտ նոյն նպատակին ետեւէն կը վազէ
մերթ բժշկական հանդէսով, մերթ ժողովր-
դական մատենադարանով և ստէպ առողջա-
պահական հատորիկներով, որոնց վերջինը չէ
անշուշտ գինովութեանը վրայ գրածը, ինչ-
պէս կարելի է ստուգել յետագայ ցանկէն:

Գր ա կ ա ն

Գործունէութիւն

ՏՕԲ. Մ. Բ. Յ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ

1863. Կիլիկիա (Հանդէս)	Կ. Պոլիս,
1864. Պարսիք	Բարիդ.
1864. Առողջարանութիւն	Կ. Պոլիս,
1870. Մատենադարան ժողով.	Կ. Պոլիս,
1874. Առողջարանութիւն	Կ. Պոլիս,
1883. Մատենադարան ժողով.	Կ. Պոլիս,
1898. Գինովութիւն	Կ. Պոլիս,
1899. Ատամուք	Կ. Պոլիս,

Մեր խօսքը մասնաւորներ իր գինովու-
թեան դէմ գրած տետրակին վրայ: Իրաւ,
այս միջութիւնը բարեբաղդաբար մեր ժողո-
վրդեան մէջ այնչափ տարածուած չէ, և ա-
րեւմտեան երկիրներու մէջ կատարած աւեր-
մունքին պէս սլքովի չարաչուք ազդեցու-
թիւնը հոս չի տեսնուիր. դեռ ոչ մէկ փո-
ղոցի անկիւն ցերիերու մէջ տապալկող գինով
կիներ կը դիտուին:

Սակայն հա՞րկ է աւելցնել թէ մինչեւ Ա-
կոսիի համբաւեալ մեծ կարասին բոլորտիքը
բազմազան երթալու չէ Բագրատի խնկար-
կունքերու, հանդիպելու և դեռ շատ չըներ ող-
բացեալ Ռչուունի թատերաբեմին վրայէն իր
յաւիտենական քրքիջներով հանգիստտեսնե-
րուն դէմքին ժպիտ՝ և սրտին սերտութիւն
կը բերէր և թատրոնը կը գոռացնէր աղա-
ղակելով:

Կրամբամբուլին այն օդին է,

Որ ամեննուս ծանօթ է,

Որուն յարգը չը գիտնալը,

Գինեմուրաց պատիւ չէ :

Կրամ բիւր բամ բուլին ,

Կրամ բամ բուլին :

Ուշուռնի , քիչ մը թերեւ հասարակութիւնը կը ձաղկէր երբ ի լուր աշխարհի կը հաշակէր որ «կրամ բիւր բամ բուլին» ամենուն ծանօթ է : Ի՞նչ պիտի ըսէր եթէ պատկած տեղէն ելլէր և տեսնէր որ այ հիմա այնչափ ընդհանրացած է մինչև յայտնի ճակատ կը մղուի բժիշկին և գինեպանին մէջտեղ :

Տօք . Իւթիւճեան իր տետրակին մէջ կը գրէ (Եթէ կարող ըլլայի արձանաց , գինեպան գոցել կու տայի տես էջ 7 տող 12) . իսկ գինեպանը կը գիմադարձէ՝ ինչպէս կարելի է Պատրիարքարանի տնկիւնը նշանաւոր արձարանին հանդէպ գինեպան սեղանին վերտառութեան հաստատել :

Ամէն ցաւերուն դարմանը հոս է ,

Մեր բժշկապեան միայն Բաքու է :

Ուստի զարմանալի չէ որ Տօք . Իւթիւճեան իւր շանթերը արձակէ գինեմուրութեան դէմ «Գինեմուրութիւնը մայր է ամէն միւսութեանց տես . էջ 15 տող 2 .» Բայց Տօք . Իւթիւճեան վիճակագրութիւնը ձեռքը մեզ կը մօտենայ :

«Իւտաթիւթ տնուն օգիտմոյ կինէն 834 «սերունդ ծնած է , որոնցմէ 709ը բանտե-«րու մշտնջենաւոր յաճախորդներ եղած են : «Այս թւոյն մէջէն 106ը ապօրինաւոր ծը-«նունդ , 142ը աղքատախնամ ընկերութեանց «արձանագրեալ , 181ը պոստիկ , 72ը ոճրա-«գործ , 7ը մարդասպան եղած են , ըստ «Տօք . Բիշմանի տես էջ 29 .»

Յայտնի է թէ ասոնք ընկերական կարգի բարոյական փառանքին են միայն , բայց առողջութեան վրայ ի՞նչ ազդեցութիւն ունի գինեմուրութիւնը . «Գինեմուր չարաչար մեռցնող հիւանդութիւններն են .

1. Լեարդի ,
2. Երիկամաւնքի ,
3. Մրտի ,
4. Թոքի ,
5. Ուղեղի

այսինքն այն ամէն գործարաններն ուսկից կ'անցնի օդին . տես էջ . 24 .

Եթէ թուրքախոտը տես էջ . 28 . գինեմուրութեան կը հետեւի արդեօք այս մոլութեան դարմանը կ'ո՞յ , ո՞չ , կը պատտախանէ Տօք .

Իւթիւճեան խնդր դարձեալ պէտք է խմե տես էջ 42 տող 20 .»

Ուստի իր յոյսը կը դնէ դատարարականութեան վրայ ինչու որ (տանձնելը կարեւոր է բայց կանխորդելը գերազանց տես էջ 34 .) և կ'առաջարկէ զպրօցին մէջ աշակերտ մը 12 տարեկան եղածին պէս պատուոյն վրայ ուխտել սաղ , ցիկանոս ու է ն գելից ըմպելիք բերանը չտանելու տես էջ 45 .»

Քանի որ ներկայ Ուսումնական Խորհրդոյ ազնիւ Ատենապետն ալ բարեբաղդարար Տօքթօր մըն է՝ արհեստակցի մը տուած խորհուրդէն անշուշտ հնարաւոր եղած օգուտը պիտի քաղէ :

Գաղով այս տետրակին լեզուին՝ հեղինակը բանասիրական ճաշակ մ'ալ ունեցեր է իր ոճը ժողովրդեան լեզուի ընթացքէն շատ վեր չը բռնելու , միանգամայն երբեմն գողտրիկ մանրամիտեցումով կը համամէ իր չարադրութիւնը , և կարծես հայր մըն է որ իր գուհները կը յորդորէ , տես նոյի պատմութիւնը էջ 17 . տող 17 .

Ուրեմն ինչո՞ւ իր խօսքերուն չանտանք և գինեհաստութեան կազմակերպութիւններ չունենանք . մեր անմահական , պաղպաղուն ջուրերուն յանցանքն ինչ է , թող դարձան աւուշիկ հովերը մեզ գտնեն թեաւտարած հովանաւոր ծառերուն տակ , և փոխանակ ձերմակ ջուրի՝ խմենք «Ծորճրր»ին ջուրը , «Թուջ Տէլէն» , «Էլմալը» : «Կէօղ Թէփէ» , «Քաւերջ Տալը» , «Փննորք Սոււու» , «Քէչէլի» «Քաւաքուրք» :

Այն ամեն առողջապահութեան կազմութիւնը գտնելու նոր տերունդը բարեկազմ և շնորհալի վերկենցաղում մը պիտի ունենայ , և պիտի հասկցուի թէ չա՛հաճութիւնը ամէն բժիշկի համար չէ , և երգիծաբանն ալ սրտախօսութիւնը իրեն պիտի պահէ և պիտի չը կրնայ ըսել «Դուն դրամէն լուր տուր Տօքթօր , . . . խնդիրը դրամին բոլորովին կը դառնայ» :

Եւ բանասիրութիւնն ալ բժշկական դատակարգին պարտական եղած յարգանքը մատուցած ըլլալ պիտի կործէ Տօք . Իւթիւճեանի պէս մարդասէր բժիշկի մը անունը՝ Բեաթիպեաններու անուան քով , հասարակաց երախտագիտութեան տուամարին մէջ արձանագրելով :

Վերջ

ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՃԱՐՏԱՐԱՐՈՒՆՍՏԱԿԱՆ

ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՄԵՏԱՔՍ

Մետաքսը բուլբուլին կը տարրերի իր կազմակերպութիւնով, բուսային և բրդեղէն նեարդներէն, ասոնց պէս բճճային յօրինուած մը չունենալուն համար, այլ աւելի կազմուած է տժգոյն գեղին, գեղին կամ սպիտակ նեարդէ մը, զոր՝ ինչպէս գիտենք, չերամի թրթուրը կ'ստայնէ իր շուրջը, որուն մէջ մնալով կ'ծիծի կ'ը փախուի:

Մետաքսի բաղաձայն տեսակներ կան, որոնք երկու կարգի կրնան վերածուիլ. Ա. — Մշակուած մետաքսը. Բ. — Վայրի մետաքսը:

Երկրորդ տեսակը կ'արտադրեն, Հնդկաստանի, Ճարոնի և Չինաստանի անտառները ապրող կարգ մը վայրի թիթեռնիկներու թրթուրները. իսկ առաջին տեսակը, մեր ամենուս ծանօթ թիթեռնայ թիթեռնիկի թըրթուրին արտադրութիւնն է: Երամուրուծութեան գասերուն մէջ մանրամասնորէն բացատրած ըլլալով մետաքսի կազմակերպութիւնը, հաս աւելորդ կը նկատենք կրկնել:

Մետաքսահանները երբ խոզակները ծախու առնեն, նեարդները մանեղէ առաջ, զոնք գասակարգերու կը բաժնեն, իրենց տեսակին համեմատ:

Բոլոր մետաքսեայ կերպաններուն մէջ, թեզանի (կիսցին թելը) թելերը՝ որոնք լայնքին կը ձգուին, ամենէն աւելի ձգտում կը բերնուն պատճառաւ, և սու հատարակ կերպանին երեսը երեւալուն համար, ասոնց պատրաստութեան ամենէն լաւ խոզակները կը յատկացնեն, որոնց նեարդները գորաւոր, կախուղ, հաւասար և ոլորի կ'ըլլան: Այդէն՝ այս թելերը պատրաստելու համար, կարծումի (խոզակէն նեարդները քակելու գործողութիւնը = *dévidage*) գործողութեան ժամանակ, առէջի (հինուածքին երկայնութեանը ձգուած թելերը) թելերէն տարրեր եղանակաւ կը պատրաստեն: Այս ընտրութենէն և այս մասնաւոր գործողութենէն յառաջ եկած մետաքսի թելը կը կոչ-

ուի «թեզանի թել, կամ կրկնոր» (*organsin*) իսկ առէջի թելերու համար կը գործածեն երկրորդական տեսակէ խոզակներ, որոցմէ յառաջ եկած թելերը կը կոչեն «առէջի թել կամ միոր»:

ՄԵՏԱՔՍԻ ԿԱՐԺՈՒՄԸ. — Մետաքսի թելերը պատրաստելու համար, խոզակները կը լեցնեն կիսազնաւած կաթնաներու մէջ, որ ջուր լեցուած ըլլալով շարունակ կը տաքընեն: Այս տաքջուրի մէջ ընկղմելուն պատճառը՝ մետաքսի թելերուն վրայ գտնուած խժային նիւթը հալեցնելով զսաւելն է: Եւ որովհետեւ մետաքսի նեարդը խիստ բարակ է, և հիւսուածներու գործածութեան անյարմար այդ վիճակին մէջ, մէկ քանի նեարդներ միացնելով մէկ թել մը յառաջ կը բերեն՝ կարծումի գործողութեան ժամանակ: Խոզակները ջուրին մէջ լեցուելուն պէս, գործաւորուհին ցախաւելով մը կը ձաղկէ զանոնք անդադար, մինչեւ որ թուշալով թելերու ծայրերը արձակուին և ցախաւելի ճղիկներուն կառչին: Այդ միջոցին գործաւորուհին նեարդներու մէկ քանիին ծայրերը միացնելով (թելին տրուելիք հաստութեան համեմատ), անմիջապէս կաթնային մօտիկը գլուխուած կորզանի (հատուէ) մը մէջէն կ'անցունէ, ուրիշ երկարելով որոշեալ տեղ մը իրարմէ կը զատուին, կրկին կորզանէ անցնելով, վերջապէս կը հասնին գէպի կարծուրը (էլէմի), որու վրայ կը փաթթուին:

Կարծումի մէջ կատարուած այլեւայլ գործողութիւններու նպատակն է, թելերը ոլորի և կտր ընել: Անթափ մետաքսի որակը կախում ունի կարծումի գործողութեան ժամանակ տարուած խնամքէն:

Կարծումի գործողութեան ժամանակ գոյացած խժժի (թիթթիք) քանակը 18էն 30 առ հարիւր կ'ըլլայ, խոզակի տեսակին և գործաւորուհին տարած խնամքներուն հետեւանքով:

Անոլոր մետաքսը հիւսուածներու գործածելէ առաջ, մէկ քանի թելեր միասին կը մանեն, և թիթե կերպով կ'ոլորեն, և այսպէս կը պատրաստեն միոլոր, կրկնոր և ըն. ապրջումները, թէ և այժմ հրապարակին վրա կարգ մը կերպաններ կը գտուին անոլոր մետաքսէ շինուած, որոց կ'ըսեն սուա-էքու = *soie écarue*.

Անոլոր մետաքսը կը բաղկանայ 4էն 18

նեարդներէ, որոնք ինչպէս վերը բոլոր, կորզանէն անցնելով կարծառին վրայ կը փաթթուին: Թեւեթըն համեմատ՝ որոշ անուններ կուտան, և կ'ըսեն՝ անոլոր երեք չորրորդ, չորս հինգերորդ, հինգ վեցերորդ, վեց եօթերորդ խողակ, ևն. ևն: Թէ ինչո՞ւ այսպէս կ'անուանեն:

Ասանկէ օրինակի համար անոլոր երեք չորրորդ խողակը: Այս տեսակը կազմուած է 4 խողակներէ: Եւ որովհետեւ կարծառ մի գործողութեան պատճառով չորսուակ նեարդներէ մին կը փրթի, և չորսուակ կարծառին վրայ փրթութեամբ երեք նեարդներէ կը բազկանայ, և չորրորդը կը ծառայէ միշտ փրթածին շարունակութիւնը ընելու, ահա այս պատճառով կը կոչուի երեք չորրորդ, այսինքն՝ 4էն 3ը առնուած: Այսպէս պէտք է հասկնալ նաեւ միւս բանաձեւներն ալ. երբ անոլոր հինգ վեցերորդ կ'ըսուի, Յ նեարդէն միշտ 5ը առնուած ըսել է. ևն:

Միւրորդ ապրջումը կազմուած է երկու անոլոր թեթերու միացումէն՝ միակողմանի ոլորումով. այսինքն՝ երկու թելերն ալ մէկ կողմ պորուած են:

Կրկնորդ ապրջումը կազմուած է նոյնպէս երկու անոլոր թեթերու միացումէն. սա տարբերութեամբ որ, նախ երկու թելերը զատ զատ կ'ոլորեն միեւնոյն կողմը, և յետոյ միացնելով կրկին կ'ոլորեն՝ բայց այս անգամ հակառակ կողմէն: Ասանցմէ զատ կան տակաւին բազմաթիւ ապրջումի տեսակներ, որոնք իրենց կազմութեան և գործածութեան նշանակութիւն համեմատ անուններ առած են:

Կարծանոցէն՝ և տրուած խողակներէ արտադրուած խճուճները՝ կամ քողը, կը լուան, օճառջրով կ'եռացնեն, կը հանեն, կը որցնեն, յետոյ սանդղակով բամպակի պէս կը մանեն, որ կը կոչուի մանած մետաքս:

Վայրի մետաքս. — Բոլոր վայրի մետաքսներու մէջ ամենէն կարեւորը Թիւսիւր (հնդկաց բարբառով «Թիւզիւրի» կկոչուի՝ միւր կամ հիւստեւ կը նշանակէ) կամ Թիւզիւր, Թազար, Թիւսաս հոչուած է, որ Անթիլէա միլիդգա անուն թիթեռնիկի թրթուրին արտադրութիւնն է: Ասոր խողակը թթենիի չերամբնէն աւելի խոշոր ըլլալով, հաւթիւն է, և թուխ արծաթագոյն:

Թիւսիւրի մետաքսը կը գործածուի հնդկական կերպաներու պատրաստութեան. բոնք թուխ կամ այծենիի գոյնը ունին: Խո-

ղակները կը խաշեն և յետոյ սանտրելով նեարդները յառաջ կը բերեն. թէ և երբեմն ալ կը կարծեն, բայց թթենիի չերամբն պէս նեարդները դիւրաթեամբ չի քակուի:

Մետաքսէ թաւինջները (peluche de soie) որոցմով ծաղմուղի (տէնիզ ասորաց) մորթի, ևն. կեղծը կը պատրաստեն, մեծ մասամբ այս թիւսիւրի մետաքսն կը շինեն:

Կան նաեւ տակաւին շատ վայրի մետաքսներ, բայց հազուադէպ ըլլալուն, գործածութիւններն ալ ընդհանրացած չէ. մանաւանդ մեր երկրին համար հարկեցուցիչ կարեւորութիւն մը չունենալուն, հարկ չենք տեսնել զբաղիլ անոնցմով:

Երբ թթենիի մետաքսի անթափ թելը մանրադիտակով զննենք, կրկնակ նեարդներէ բաղկացած կ'երեւի, որոնք կը նմանին եռանկիւնաձեւ սէգի, քիչ շատ ողորկ, անկիւնները կըսրցած անկանոն կերպով, երբ օճառջարի մէջ խաշենք, երկու նեարդները իրարմէ կը բաժնուին:

Շար.

Ղ. ԲՈՂԱՏ

ԲԺՇԿԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

ԹԻԻ 71 ԵՒ 72 ՀԱՐՑԱՆՑ

(Շարունակութիւն և վեր ԳԻ 47)

Հիմա պիտի փորձուիմ ըսել թէ՛ Իրսիրատի թուները չէյթան թըրնաղին ուրոյն հիւանդութիւն մը չեն ճանչցած, և ոչ ալ կատարեալ ու գոհացուցիչ որոշում մը տուած գոթաղգարար. այլ հասարակ ժողովուրդի բերնին մէջ գարձող բան մը սեպած են: Ուստի ցաւ է ինձ ըսել թէ յարդելի խնդրարկուն փափագը յազեցնելու հետաքրքրութիւնը գոհացնել քիչ մը գոթաւար ու գրեթէ անկարելի պիտի ըլլայ: Միայն սաշափը կրնայ ըսուիլ, գիտական ողջ

գիտելեաց վրայ առանց հիմնուած ըլլալու սակայն, թէ այդ ստանալոյի եղանակները իրենց գլուխ բարձրացուցած մասին մարթային շնչառութեան և կամ աննդառութեան թերի կատարումէն հաւանական է որ առաջ դան: Այս առթիւ ձեզ առաջարկեմ անանցմէ զերծանելու անկուտի միջոց մը, որ արդէն իսկ փորձուած, և հեռի ամենայնի, փորձանքի և վտանգի տեղի առէ, յաւասարի է որ թերեւս օգտակար ծառայութիւն մը մատուցանէ: Ամէն անգամ երբ եղանակներ կտրէր, եղանակներնուդ և մատերնուդ վերնակողմի մկանիս մէջտեղ գտնուած ամենաբարակ մաշկը՝ որ եղանակին կոչած փակած է, զմեկի մը և կամ ու իցէ բանի մը ծայրով դէպի մկանի կողմը հրելով զառնցէք՝ հեռացուցէր եղանակէն. այս կերպով ամենափոքր միջոց մը բացած կ'ըլլաք եղանակին և մկանին մէջտեղ, որով նոյն մասը, ուր յիշեալ երանի եղանակները ծնունդ կ'առնեն, կը շնչէ և կամ կը սնանի պէտք եղածին պէս, ու այս անհմտաւ եղանակները գտնու չի տար:

Փորձեցէք այս միջոցը. թերեւս ստանալոյ կեղծ եղանակները չի գտն ողջունել ձեր մտաները: Սա ալ ըսենք թէ՛ երբ այդ գորշի եղանակները ձեր մտաներուն վիճակին, զգուշացէք զանոնք քաշել բրցնելէ, վտանգի երբ ստանալոյին հոգին ցտցնէր անոր եղանակները խլելով, գիտցէք թէ մեծ թակարդ մը կը լարէ ձեզ ու անտանելի փորձանքներ կը բանայ ձեր գլխուն(*):

* * *

(*) ԾԱՆ. ՈՒՐԲ. — Երբ այդ մարթացեալները պատահին ձեր մտաներուն վրայ, փորձեցէք հեռեւեալ դիզը:

Առէք սուրճի գաւաթի պարունակութեամբ մաքուր ջուր, եռացուցէք, և մէջը հալեցուցէք այնչափ կալի երկրամաս (պիրամետ սը րօթա) մինչև որ յագենայ. յետոյ լաթէ մը մեկցէք, և այդ լուծաջուրը

Պ. Ունեւանի հարցումները աչքէ անցնելէ ետքը, ակնարկս խելոյն կ'իշխայ Պ. Քէհեաւանի հարցման վրայ, որով տարի կոչուերն գարնանելու միջոցը կը խնդրէ: Այս հարցումով Պ. Քէհեաւան պահ մը յիշեցնել կուտայ ինձ երկու տարի առաջ այդ անիծեալ կոչուերուն ձեռքէն քաշած ցաւերս ու կրած տանջանքներս, ճիշդ իր ակնարկած ութնամեայ մանկիկին նման, որուն համար կ'ըսէ թէ խեղճը կը առաւապի կեանքի անմեղ տարիքին մէջ: Թէպէտեւ այս հարցման խմբագրական ծանօթութեամբ պատասխանուած է, սակայն անշուշտ ներքի կը համարուի գարնանման թերին լրացնելու համարձակելու համար:

Նախ սխալնք ընտանեկան զեղերէ, որոնք թէպէտ օգտակարութենէ զուրկ չեն, սակայն հիմնական բուժում մը չեն կրնար առթել. օրինակի համար, լոյսիկը և կամ լինանք բոլորած և կտրելով կոշտին վրայ կը զեղեցնեն և կը կապեն. մէկ քանի ժամուան մէջ, գոհացուցիչ արդիւնքը կուտայ չիտակը, սակայն ոչ հիմնական:

Զը մտնանք նաեւ կուրագական այն անթիւ, անհամար պատարասութիւնները, որոնք բոլորովին հեռի կոչուերու հակընդդէմ օգտակար ծառայութիւն մը մատուցանելէ, աւելորդ է բոլոր որ միմիայն գրամ շորթելու կը ծառայեն գրգռող աքտը: Փորձածեցէք հակակոշտային ուղեղանին, և կամ կարգ մը կիզիչ նիթերով ու հականիթիչ տարրերով միախառնուած կուրագական պատարասութիւնները, և ապա համազուեցէք:

Կոհեցէք սրտակի մը մէջ, որ չառ երկար առեւն կրնայ անագարտ մնալ: Այս լուծաջուրէն երբ մէկ քանի անգամ այդ մարթացեալներուն վրայ քսէք՝ զար օրինակ լուցկի մը ծայրիկով, կը չորնան և կ'անհետին:

Այս դեղը նոյն ազդեցութիւնը կ'ընէ նաեւ կոծիւներու. այսինքն՝ մէկ երկու անգամ քսելով, անոնք ալ կը չորնան և կ'անհետին:

Ինչպէս ի վերեւ յիշեցի, ինձ ալ վիճակեցաւ այդ գարշելի կոշտերը. շատ դեղեր փորձեցի, շատ բարասաններ գործածեցի, փոխարէն ոչինչ օգուտ քաղեցի: Սակայն փափաք, այսօր հիմնապէս բուժուած՝ դոյզն արատնջ մը իսկ չունիմ այդ անողոք կոշտերէն, որ կը պարտախմբէր Պ. Զարիֆեանի (գեղադարձ ի Գուլգարու) հնարած հակակոշտային պատրաստութեան:

Քաջայոյս եմ թէ գործածողներն ինձ նման գոհ և միանգամայն երախտապարտ պիտի մնան առ յաւէտ:

ՄԱՏԱԹ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ՄՈՌՑՈՒԱԾ ԳԻՒՂ ՄԸ

Աշխարհացոյց քարտէսին մէջ, մէկ ակնարկով կարող ես գտնել Կիպրոս կղզին. եթէ հայեցողութիւնդ տկար է, հեռագիրտակ ի ձեռքն ելի՛ր նորա հարաւային լեռներէ միայն վրայ, և դիտէ միշտ զէպ ի հիւսիս՝ յայնկոյս ծովուն, ուր առաջին տկնարկէ՛լ չպիտի վերսկսի լեռ մը՝ որ լերկ կտտարով կը բարձրանայ ծովէն երկու ժամ վերելքով: «Ճէպէլ ախրա» լեռն է ան, որու գագաթին կը տեսնուին հիւսիսային ստորտը Արեւելիս. հանդէպ հիւսիսի՝ 16 ժամ հեռու Իսկէնտէրուն կամ Պէլէն. արեւ. հիւսիսային կողմը 8 ժամ Անտիոք, արեւելեան կողմը 8 ժամ Ճըսըր Շուլուր (գայմագամութիւն) 18 ժամ Խովիպ, 30 ժամ Հալէպ քաղաքը, և հարաւային կողմը 14 ժամ հեռի Լաւոգիկէ: Սոյն լեռան հարաւային կողմն փայ, այսինքն լեռան կտտարէն ժամու մը չափ ցածը, ստորին շղթաներու պարանոցաձեւ միջուկի մը մէջ կը գտնուի 700ի չափ տուներով և երեք տարբեր դաւանանքներով հայաբնակ գիւղ մը, որու արեւելեան և հարաւային կողմերը չըջապատող ագարակները ի միասին հաշուե-

լով կը գտնենք 1220 տուն, ասոնցմէ շուրջ 900 տունն է հայ. 55—60 տուն՝ հայ հռոմէական, և իւր 250 տուն հայ բողոքական: Քէսսալ է այս գիւղին անունն, որ կառավարական բաժանումով, Ինդոս գետի ձախ եզերքին վրայ՝ Ճըսըր Շուլուրի գայմագամութեան ենթարկուած է. մէջն ունի նահապետական արհեստասրներ: Կոշկակար 24 խանութ, երկաթագործ 6, պղնձագործ 4, դարբին 1, պայտագործ 1, սանտր շինող 1 և 21 խանութ ալ եւրոպական կամ անգլիական ապրանք տաւառաւորով գրաւող: Ունի նաև 1 դեղատոն և երկու բժիշկ, որոնց մին Պէրութի գերմանական վարժարանէն ընթացաւարտ և վկայեալ է: Ասոնցմէ զատ ունի նաև կղայեկողներ, որք կ'աշխատին չըջակայ գիւղերը և իրենց տուներու մէջ. ինչպէս նաև կտաւագործ (Ջուլհա) և մագման՝ որք կը գործեն պայտակներ, կապերտներ ևն: Այս գիւղի բնակիչները ընդհանրապէս աղքատ դասակարգի կը վերադարձնուին, չէ թէ միջավայրի անընդունակութենէն կամ իրենց ծաւրութենէն, այլ թէ ուսումն ու գիտութիւն հոն մուտ գտած չեն ցարգ: Ինչ որ տեսած են իրենց պոպկոյն, այնպէս մնացած են մինչեւ հիմա. որով թէ՛ բարոյապէս և թէ՛ նիւթապէս խիստ յետադէմ վիճակ մ'ունին, իրաց այս արգահատելի կացութիւնը կը յիշեցունէ մեզ, Անաստուրի ներքին գաւառներու բնակչաց 50—60 տարի տառջութեան կացութիւնը:

Ազգային պաշտօնական մարմնաց պաշտպանութենէ և հոգածութենէ բոլորովին զուրկ մնալով, չէ թէ միայն Կ. Պոլսոյ Պատրիարքարանը ծանօթ մնացած է իրենց, այլ նոյն իսկ չգիտեն ցարգ թէ ո՞ր Առաջնորդական Թեմի կամ որ նոյնն է, ո՞ր աթոռի իրաւասութեան տակ կը գտնուին: Ստոյգ է սակայն, որ Երուսաղէմի միաբան և Լաւոգիկի վանահայր՝ Թադէոս վրդ. Եկեղեցանը, պաշտօնաւորաց հաւաքման համար, Կիլիկիոյ հանգուցեալ Մկրտիչ Կաթողիկոս պաշտօն ստանձնած, ու անուանական առաջնորդ կարգուած է 17—18 երկաւր տարիներէ ի վեր, որու ներկայութիւնն ու գիւղային խնդրոց մէջ ձեռնմխութիւնն, անուղղակի կերպով պարտաւորած է ժողովուրդը այլակրօնութեան դիմելու:

Գիւղիս հայոց կրօնական գգադման վսեմութիւնն հետզհետէ նսեմանալով, յանդուգն աւանդապահներ դիւրահաւան տարրի մը փոխակերպած է, զի առաւօտուն հայ, կէս օրին՝ բողոքական, երեկոյն հռոմէական են։ Գիւղերը մինչև ըստ ալ չեն դադրիր մորմոն կամ թօնտուրի ըլլալէ։ Միւս աւուր առաւօտեան կ'սկսին նոր նոր աղանդներ ստեղծելու ետեւէ ըլլալ։ Վիճարանութեան բռնուն սիրահարներ են, մանաւանդ բողոքական տարրը, որ դրամագլուխ ունի՝ Յովհաննու յայտնութիւնը (չարաթականներու հաւատոյ գիրքը)։ Հարիւրին հինգ հազիւ պարզ ընթերցում գիտցողներ կը գտնուին, ու այս դիրքի մէջ կրօնական վիճաբանութիւններ կամ աւետարանի քննադատութիւնները չեն դադրիր բնաւ։

Հայերը ունին երեք քահանայ տեղացի. մին ծերուկ, իսկ միւս երկուքն երիտասարդ. առանց մին կը հովուէ չրջակայ ագաթակներու ժողովուրդը։ Գիւղին մէջ ունին փոքրիկ և բառին բուն նշանակութեամբը աղքատ մէկ եկեղեցի, երկու փոքրիկ խաչեր, մէկ աւետարան, եօթը հատ հասարակ աշտանակ, ահա՛ հարստութիւնը։

Ճաշոց գրքի, շարականի և ատենի ժամագրքի թերթերու բեկորները եւթ կը նշմարուին։ Եկեղեցւոյ գետինն փռուած կանքանի մը տեղական խտրներ, որոնք թէ՛ եկեղեցւոյն և թէ՛ վարժարանին կը ծառայեն, միշտ մէկ տեղէն միւսը փոխադրուելով։ Վարժարան ըսինք, իրաւ չը հասկնաք. այո՛, վարժարանի անուան տակ կը ծառայէ նաև այցելու վարդապետաց հիւրընկալ (ննջարան, եթէ երբեք պատահի). տեղացիք «խորձ» անունը նաև կուտան, ժողովատեղի և ի սլահանջէ հարկին՝ կը համարձակիմ ըսելու թէ ախոռ ալ ըլլալու արժանապատուութիւնն ունի։ Ահա՛ այս է վարժարանի հոմանիշը։ Դասագրքերու անունները, տպագրութիւնները, հայ, հռոմէական կամ բողոքական հեղինակութիւնները կարելի՞ է միթէ թուել մի առ մի, զի արդէն ո՛չ սկիզբն ունին և ո՛չ վերջ. ահա այս է տեղւոյս հայոց ամբողջ էութիւնը։ Չը գիտենք ի՞նչ կը խորհի Ազգ. Պատրիարքարանը այս խեղճ ու լքեալ ժողովուրդի մասին։ Թէպէտև կրկնակի աղերսագրեր իրկուած, տեղեկութիւններ հաղորդուած և

եկեղեցւոյ կամ վարժարանի համար խնդրագրեր եղած են, բայց ցարդ ու է պատասխան մը առնուած չէ. եւ եթէ անմիջական օգնութիւն մը չը հասնի, ինչպէս ցայտի և այսմհետէ նաև վստահ եղիք որ մնացորդ 3500—4000 երկսեռ հայ բնակիչները իրենց մայրենի եկեղեցիէն օտարանալով բոլորովին կորսուին։

Ինչպէս բարոյապէս՝ նիւթապէս ալ աղքատ են. բնակչաց մեծագոյն մասի գրազու մն է բեռնակրութիւն յիսկէնտէրուն և ալլուր։ Այս գիւղ՝ երկրագործութենէ բոլորովին զուրկ ըլլալով, ցորենը, գարին, իւղը, պանիրը ևն. կը ներածուի դուրսէն. իսկ արտածութիւնն է շերամ, որ մեծ քանակութեամբ թթաւ տաններ ունենալով՝ և նպանտաւոր կլիմայի շնորհիւ, կը յաջողին մասամբ օգտուիլ անկէ, ինչպէս նաև տեսակ մը ծառի ձէթը՝ որ ձիթենոյ ծառերէ աւելի խոշոր ըլլալով, անոր պէս պտուղ մը կուտայ, ուսկից կ'արտադրուի ձէթը, բայց խիստ անախորժ, և տեղացիք «զաւ» անունը կուտան որ կը գործածուի օճառի համար. ասոր կուտը կակուղ և փխրակ ըլլալուն, չորքոտանի կենդանիներու իրր սնունդ կը տրուի։

Գիւղիս բնակչաց լեզուին վրայ գաղափար մը տալու համար բաւ է կարծեմ կարդալ Ղուկ. Աւետարանի Բ Գլ. 8 համարէն, Քրիստոսի ծննդեան հետեւեալ հատուածը.

«Վէ Հռովմանա կերէն ան մհալը օվան իրոց, քի կը պիհերէն նըսով գիւղիւր վիրինց սուրէքը։ Վէ տըրուչը հրիչաոցը քրիշոյվ էնունց վէ տըրուգը ձէլալը էնունց էթրաֆը ձիգիւց վէ վաիցուն մինձ վախով։ Վէ էսաց դաբէնունք հրիչաոյը մը վախնաք, քի իշթէ ձի մինձ չալլըլը միւթաամը կուտում. ըմբն ժողովուրդէն իլի պըրըննու։ Քի՞ծնից ձի խոր խելիտոյ մը ուժւոց տէրնի, դուրիթէն քաղըք, վէ նիլաւը ձի ասնի, սլըր գանէք չուճօգ մը գունտագլամիլիոց վէ մօօրը դըւոց։ Վէ տիանալը իլով հըլտէիօն հետը պարապօր ըրկնօցը էաքէրնէն շէտաւցըք քի կուրհներէն գատտօ՞ վէ կըսերէն փառք բունձր կինոյ ասրնծու վէ իղչերէս ըրվան սէլամէթ վէ ինտանէն մէջը խօշնուտլգ թող ըննու»։

Այն գիւղացոյ սովորութիւնները, աւանդութիւնները, հնութիւնները ևն. յատուկ յօդուածով մը գրել կը խոստանամ։

Քէսապ

ՍԱՐԳԻՍ Յ. ՊՈՂԻԿԵԱՆ

ՇԵՐԱՄԱՐՈՒԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Մ. Տիւքլո՝ երկու տեղեկագրեր ներկայացուցած է վերջերս Ֆրանսայի Երկրագործական Ազգային Հնկերութեան, որոց մին՝ Մանքէլիէի շերամաբուծական կայարանի տնօրէն Մ. Լամպէտի, իսկ միւսը՝ նոյն այդ կայարանի պաշտօնեաներէն Մ. Լաֆօնի կողմէ պատրաստուած է:

Այս տեղեկագրերը կարեւոր և իրական օգտակարութիւն մ'աւնենալուն, փախաքցանք մեր շերամաբուծ ընթերցողներուն ևս հողորդել, որոց համառօտութիւնը ահաւասիկ:

Բուծման վերջի օրերուն մէջ՝ տաքութեան մեկ քանի աստիճան նուազումին ազդեցութիւնը՝ շերամի խոզակներուն վրայ:

Փորձառութիւնները հաստատած են որ, թթեւի շերամին բուծման ժամանակ, ամենէն նպաստաւոր տաքութեան աստիճանը 18-էն 25-ին մէջ կը գտնուի: Բայց խնդիր է գիտնալ թէ, այս երկու սահմաններուն մէջ մի աստիճանին վրայ կենալու է: Կամ թէ՛ պէտք է միշտ միևնոյն աստիճանին վրայ կենալ, և կամ նպաստաւոր կ'ըլլայ թրթուրներու տարիքին և բնախօսական վիճակին համեմատ տաքութեան աստիճանը փոխել: Այս հարցերու մասին՝ հեղինակները համակարծիք չեն, և ալ՝ չը պիտի ըլլան՝ մինչև որ ճշգրտորէն չի հասկցուի թէ՛ ինչպէս կրնան կենցաղիլ թրթուրները, իրենց կենաց սա կամ նա չըջանին մէջ՝ տարբեր բարեխառնութեանց ազդեցութեան տակ:

Մ. Լամպէտ՝ մասնաւոր ուշադրութիւն մը դարձնելով այս հարցերուն վրայ, վերջի երկու տարիներուն մէջ (1897—98) կարգ մը շահագրգիռ փորձեր կատարեց. հատկապէս համար թէ, բուծման վերջի օրերուն մէջ եթէ բարեխառնութիւնը մէկ քանի աստիճան վար բռնուի, և շերամի թրթուրային վիճակը Երկրագործութիւն, որդեօք խոզակներու ծանրութեան, ծաւալին, կազմութեան, գոյնին և սրտիկին վրայ ունէ նշանակիչ տարբերութիւն մը յառաջ կուգայ:

Մ. Լամպէտ իր փորձերը կատարած է այդ երկու տարիներուն մէջ. 17 ապրիլի 17-ի և 3 խառնածին տեսակներու վրայ: Չորրորդ խորխացումէն սկսելով, տարբեր ժամանակներու մէջ, հետզհետէ իւրաքանչիւր տեսակի վերաբերող թրթուրները երկու հաւասար մասերու բաժնած և զատ զատ տեղուանք դնելով բուծած է հետեւեալ կերպերով: Առաջին բաժանումները, որոնք իբր ապացոյց պիտի ծառայեն, փորձարկութեանց, մինչև վերջը միևնոյն բարեխառնութեան աստիճանին մէջ պահուած են. իսկ զատուածները՝ բուծման սովորական բարեխառնութեան 1 կամ աւելի նուազ աստիճանի մէջ: Եւ ահաւասիկ այս փորձարկութեանց հետեւութիւնը, ըստ Մ. Լամպէտի տեղեկագրին:

Նախապէս 21, 23 կամ 24 աստիճան բարեխառնութեանց մէջ բուծուած թրթուրներ, իրենց Ծրէ չըջանին մէջ Չուկէտէն մինչև 8 աստիճան տաքութեան նուազումի ենթարկուելով, խոզակներու ծանրութեան վրայ խիստ կարեւոր յաւելում մը յառաջ եկած է:

Միևնոյն չարունակական բարեխառնութեան մէջ պահուած թրթուրներու արտադրած խոզակներու ծանրութիւնը 100 ենթադրելով, միւսները՝ որոնք հետզհետէ բարեխառնութեան նուազում մը կրեցին, իրենց արտադրած խոզակները՝ 8.5 առ հար. հաստատ և հաւասար յաւելում մը յառաջ բերած են. այսինքն՝ առաջինները 100 կշռած առնենին, երկրորդները կշռած են 108.5 (բազմապատկումը եղած է խոզակները չորցնելէն վերջ): Ծանրութեան յաւելումը՝ փորձարկութեանց երկարատեւութեան համեմատ մինչև հարիւրին 15 բարձրացած է: Այնպէս որ՝ կ'ընէ Մ. Լամպէտ, ենթադրելով որ, բուծումը 25 կամ 26 աստիճան վրայ կատարուած ըլլայ, միշտ միևնոյն 21, 23 կամ 24 աստիճան բարեխառնութիւնը անփոփոխ պահելով, խոզակի արտադրութիւնը 60 քիլո ըլլայ. միևնոյն թրթուրներու տեսակէն ուրիշ տեղ մը իրենց վերջին օրերու մէջ բարեխառնութիւնը 2, 3 աստիճան նուազեցնելով, խոզակի արտադրութիւնը մինչև 9 քիլո աւելի պիտի կշռէ, որ շերամաբուծին հոռոյթին վրայ 27 ֆունտի յաւելում մը յառաջ պիտի բերէ, եթէ որ քիլոն 3 ֆրի ծախած ըլլայ:

Այս խոսակները ծանր ընթացիկ հանգերձ, մետաքսի քանակութեան մասին ալ միանե-
րուն հաւասար աստիճանի մը մէջ գտնուած
են. որակը ընդհանրապէս միաներուն հա-
ւասար, իսկ մէկ քանի տեսակներու մէջ մի-
այն՝ աւելի ընտիր: Մ. Լամպէր դիտած է
նաեւ որ, գունաւոր խոսակները աւելի հա-
ւասարութիւն մ'ունին իրենց գոյնին մէջ:

Տաքութեան նուազումին հետեանքով,
թրթուրներու կեանքը՝ սովորականէն 3 օրի
չափ աւելի երկարած է, գրեթէ նոյնչափ և
ցախերը ելլելու տեղութիւնը: Ամենէն ա-
ւելի ցախերը ելլելու ուշացողները անոնք ե-
ղած են որ՝ երկար տոնն պակաս տաքու-
թեան ազդեցութիւնը կրած են. իսկ ընդ-
հակառակը, անոնք որ իրենց վերջին չրժանը
լրացնելու մօտ փորձարկած են, մի անգին
աւելի կանուխ ելած են:

Ինչպէս կը տեսնուի վերոյիշեալ տեղեկու-
թիւններէն, թէ՛ մէկ երկու աստիճան տա-
քութեան նուազում մը մէկ քանի քիւտ ար-
տադրութեան վրայ յաւելում մը յառաջ կը
բերէ, ինչ որ հասցի կարեւոր առաւելու-
թիւն մ'է. միւր տեղացի շերամաբայծները
կրնան այս տարի փոքր քանակութիւններու
վրայ փորձիւր կատարել. գար օր. շերամա-
տան մէկ անկիւնը, որ կրնան ուղած-
նուն չափ պաղ պահել, բուծարաններու վը-
րայ եղած թրթուրներէն որոշեալ քանակու-
թեամբ առնելով հոն մասնաւոր կերպով կը
բուծեն, և նոյն քանակութեամբ ալ բուծա-
րաններէն միայն վրայ զատելով, սովորական
եղանակաւ կը խնամեն, և այսպէս կրնան ու-
րոշապէս հասկնալ յառաջ եկած տարբերու-
թիւնը:

ՁՈՒՐԵՐՈՒ ՄԱՍԻՆ. — Ըստ Տըդ. Լանկոյէնի,
երբ նիքելի լոգանքներուն մէջ նիքելի քը-
րուկ, նիքելի անկենդանաւ և անուշադրիոնի
քըրուկ գտնուի, նիքելագոծումը հաստատ,
երկարատե չըլլալ. և հետեաբար յարագոծ-
ումը մետաղներն ալ մթնոլորտային ազդե-
ցութեանց դէմ պէտք եղածին չափ չի կըր-
նոր պաշտպանել, և այս մասին՝ մանաւանդ
նիքելագոծումը երկաթներուն աւելի մաշու-
մը կը դիւրացնէ և կը փութացնէ, փոխանակ
արգիլելու, մինչև իսկ եթէ այդ լոգանքները
թիթեապէս ալքալին ալ ըլլան:

Այս պարագային մէջ յառաջ եկած ժան-
գը (փաս)՝ նիքելագոծումը առարկաներու
առաջուց անբաւական կերպով լուսացում,
մաքրում ըլլալուն հետեանքը չի կրնար նը-
կատուիլ, որովհետեւ՝ փորձով հաստատուած
է որ, մինչև իսկ ութն անգամ մաքուր ջու-
րով լուսացում և թորեալ տաք ջուրով ցայ-
ումը առարկաներն աճաւ փեր յիշուած
նիքելի լոգանքներով յարագոծուելին վերջը,
կրկին ժանգոտած են: Անուշադրիոնի քը-
րուկ աւելցնելով լոգանքներին մէջ, թէև յա-
րագոծումը դիւրաւ և փութով կը կատար-
ուի, բայց նիքելը՝ առարկային ամէն կողմը
միւսնոյն հաւասարութեամբ և խտութեամբ
չի մթ երկր. և այսպէս՝ բոնի կերպով ձեռք
բերուած մթ երուամը, ուզուած յատկութիւն-
ները չունենար. աւելի կոշտ կ'ըլլայ երեւոյ-
թով, և իր ներքեւը գտնուած մետաղին ա-
մէն կողմը հաւասարապէս չի ծածկեր. եւ
վերջապէս, անուշադրիոնի քըրուկի ազդե-
ցութեան տակ մթերուած նիքելը չափազան-
օր էն կակուղ կ'ըլլայ, ինչ որ մեծ պակա-
սութիւն մ'է, եթէ յարագոծելի առարկան
ձեռարուեստական ուրիշ գործողութիւններու
չը պիտի ենթարկի վերջը. և մանաւանդ այն
պարագային, ուր կակուղ մետաղի մը երեսը
կարծր տոկունութիւն մը յառաջ բերել կ'ուզ-
ուի նիքելագոծումով:

Ընդհանրապէս կալվանագոծները իրենց
լոգանքներուն մէջ բաւական մեծ քանա-
կութիւնով անուշադրիոնի ծծմբատ (սիւլֆատ
տ'ամօնիում) կ'աւելցնեն: Ըստ Տըթ. Լանկ-
ոյէնի, այս յաւելումն ալ յարագոծ նիքելին
փայլը կ'առնէ և կը տոգունէ, և մթերումը
փութացնելով, հաստ խաւ մը կազմելու կ'ար-
գելէ:

ԱՐՅԵՍՏԱԿԱՆ

ՆԻՔԵԼԱԶՕՄՈՒՄ

(Շերամաբայծի քիւտ 47)

Վէսթմանի երկրորդ տարազը

Նիքելի ծծմբատ	60 կռամ
Ոսկերորական թթուութ	20 »
Թորեալ ջուր	1200 »

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՆԻՔԵԼԱԶՕՄՈՒՄԻՆ ԼՈԳԱ-

Վէսթոնի ասկերորական թթւումով խառն լոգանքը, բառական գոհացուցիչ արդիւնք կուտայ թէ՛ և, բայց մթերումը ամէն կողմ համահաւասար չըլլար. շատ անգամ կը հերձուի (եւփրագլանմագ), մանաւանդ եթէ նիքելի մթերումը հաստ ըլլայ: Այնպէս կ'երևի որ, լոգաջութին մէջ ասկերորական թթւումը աւելցուած ատեն, նիքելին կ'սորոքելու յատկութիւնը կ'աւելնայ:

Լանկայէնի լոգաջութերը, սրոց հիմը՝ զրտուած նիքելի ծծմբատը (սիւլֆատ տը նիքէլ բիւռ) կը կազմէ, և ասկէ զատ ալ փոքր քանակութիւններով հալորդիչ նիւթեր կը գրտնուին մէջը, մինչև ցարդ ամէնէն յաջող արդիւնքը տուած են: Այս լոգաջութերով կ'ըստացուի նիքելի կարծր խաւեր, որոնք սքանչելի կերպով կ'սորոքուին, կը փայլին, և մետաղին ամէն կողմը համահաւասար կերպով կը ծածկեն, և յարազոծումն ալ չի հերձուիր:

ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅՔԸ:—Ինչ որ ալ ըլլայ գործածուած լոգանքը, և ելեկտրականութեան աղբիւրը, գործողութեան ուղղութեան մասին պէտք է հետագայ պայմանները ուշի ուշով նկատողութեան առնել եւ գործադրել:

Ելեքտրամուծները՝ (կամ հոսանքը = anode = անոա) կրնան ըստ կամայ լուծելի (զուտ նիքելէ) կամ անլուծելի (բլաթին կամ ածուխ) ըլլալ:

Ահաւասիկ իրենց առաւելութիւնները և անպատեհութիւնները.

Բլաթինէ ելեքտրամուծները երկար ատեն կը դիմանան, բայց խիստ սուղ են:

Ածուխը՝ ածան է թէ՛ և, բայց չուտ կը քայքայի: Չտուած նիքելով, լոգանքի ուղղութիւնը որոշ և հաստատ կ'ըլլայ: Իր միակ պակասութիւնը այն է որ, երթալով ալքալիցած յատկութիւն մը կ'ստանայ: Բայց այս անպատեհութեան առաջըը դիւրաւ կ'առնուի, լոգաջութին մէջ քիչ մը լեմոնական թթւում (ասիտ սիթուիք) խառնելով, և մերթ ընդ մերթ ալ լուծաջութին բնութիւնը կը քննեն թուռնըսօլի թղթով:

Այս երկու ելեկտրամուծներով, ընդհակառակը, լոգանքը կը թթւումանայ, որու առջըը առնելու համար, քիչ մը ջուրի մէջ նիքելի բնածխատ (քառպօնաթ տը նիքէլ) հալեցնելով մէջը կը խառնեն:

Պէտք է միշտ յիշել որ, լաւ և գեղեցիկ յարազոծում մ'ունենալու համար, լոգաջութը ըստ կարելոյն չեզոք ըլլալու է:

Միւսոյն անգամ լուծելի թէ՛ անլուծելի ելեկտրամուծներ միատեղ կարելի է գործածել, զորս հետեւեալ կերպով կը համեմատեն. երկու ելեքտրամուծ անլուծելի՝ մէկ լուծելիի համար: Ելեկտրամուծներու մակերեսի տարածութիւնը պէտք է քիչ մ'աւելի ընդարձակ ըլլայ յարազոծելի առարկաներու երեսի տարածութեանէն: 100 լիթրա լոգաջութի համար 40էն 85 հր.մ. քառակուսի (սանդլիէզոք քառէ) մակերեսով առարկայ կրնայ կախուիլ:

Ելեկտրական հոսանքը յառաջ բերելու համար երբ բարդ (րիւ) գործածուի, պէտք է նկատողութեան առնել որ, յարազոծուելիք առարկաներու մակերեսով՝ բարդերու մէջ գտնուած զինկերու ամբողջ մակերեսով էն աւելի ընդարձակ կ'ըլլայ:

Նոյնպէս ուշադրութիւն ընելու է որ, առարկաները ամբողջովին լոգաջութին մէջ ընկղմած ըլլան, բայց խորութեան մինչև երկու երրորդ մասը:

Նիքելազոծումի համար խիստ զօրաւոր հոսանք պէտք է. 200էն 300 լիթրա պարունակող լոգարանի մը համար, զոր օր. 22 հար. մէթր մեծութեամբ Պէտնսանի 8 բարդ պէտք է: Այս պատճառաւ Եւրոպայի մէջ ելեկտրական մեքենաներ կը գործածեն:

Լոգաջութին իւրաքանչիւր լիթրային մէջ երբ 15 կուամ քանակով նիքել գտնուի, իւրաքանչիւր տասնորդամէդր քառակուսի մակերեսի վրայ ժամը 2 կուամ նիքէլ կը մըթերի:

Լոգարանի բարեխառնութիւնը պէտք է ըլլայ վերի վերայ 40 հարկւարդի (սանթիկոստ) ատօման:

Պզտիկ առարկաներու համար, լոգարանը պէտք է աւելի տաք ըլլայ, և յախճապակիէ պարզուտի մը մէջ դնելով կախուիլ է, առանց երկար ատեն մէջը ձգելու:

Երբ առարկաները մակազոծուելէ վերջ լոգարանէն դուրս հանուին, տաք ջուրի մէջ ցայելու և փայտի սզոցով չորցնելու է. յետոյ արագաչարժ թաւալուն խողանակով մը փայլեցնելու է, որու վրայ կը հոսեցնեն անդադար կաւիճի թանձր ջուր մը: Այս գործողութեանէն վերջն ալ ասուրի կտորի մը վրայ

Անդղիական կտրվիր կոչուած հոգէն զնկելով կը չփեն, կը փայլեցնեն:

ՆԻՔԵԼԱՏՈՒԹՅՈՒՆ. — Երբ գործողութեան ժամանակ առարկաներէն մէկ քանիին վրայ տեղ տեղ նիքելը չի բռնէ, գործողութեան վերսկսելէ առաջ, մթերուած նիքելի խառը մաքրելու է նախապէս, որ հետեւեալ կերպով կ'ընեն.

Նիքելատումի լողարան


Ջուր	1 լիթրա
Անկենդանական թթուութեան	1 »
Ծծմբական թթուութեան	1 ուկէս »
Կալիի անկենդանաւոր (ազոդադ տը բոթաս = կիւվէրչէլէ)	10 »

Վրիպած առարկաները պղնձէ թելերու կապելով, եռացած ջուրի մէջ թաթիսելու է, ուրկէ վերջը հանելով վերոյիջեալ լողարանին մէջ ընկղմելու է 1 ուկէսէն 2 ժամու չափ, յարազօծուած նիքելի խառն հատաւորութեան համեմատ: Երբ ու է նիքելի հետք չի մնայ, կը հանեն և պաղ ջուրի մէջ կը լուան, յետոյ տաք ջուրի մէջ, և փայլեցնելով նիքելազօծումի կը վերսկսին:

Նիքելատումի գործողութեան ժամանակ լաւ ուշադրութիւն ընելու է որ, բուն խոկ առարկան չի խաթարի:

Ղ. ԲՈՒԼԱՏ

ԱՅԽԱՐՅԻԿ ԿԵԱՆՔԵՆ



Ի՞նչ է կեանքը անամուսին, Անհամ ու սին.

ԱԼՓԱՍԼԱՆ

Հեռագիրը՝ այդ հրաշալի գիւտը իր խորհրդաւոր թիւերու միջոցաւ իր անձնուէր, ժիր ու վատաւարեկի զաւակներէն մէկուն ուրախաւթ լուրը Գարաթաշի ապառաժուտ բարձունքէն բերաւ յանձնելու ազգօգուտ

Հանրագիտակի հիւրընկալ էջերուն՝ այն է մեր Իզմիրի համակրելի հոգեշաղկապ թըլթակցին՝ հեռագրատան կտրուապէս պաշտօնեայ Մեծ. Արատչէս էֆ. Օհանեանի բերկրաւթ նշանախօսութիւնն ընդ համետուհի Օր. Եալքճեանի, գիւտար Արարկիրցի Պատ. ազգայիններէն հանրածանօթ փաստարան Մեծ. Մարտիրոս էֆ. Եալքճեանի՝ անգամ Իզմիրի կուսակալութեան վարչական ժողովոյ. — Արատչէս էֆ. Օրթագիւլի բալմարդիւն «Հայկական-Կրթարանի» յաջողակ, քաջուսում ու իր հանրածանօթ վարդապին (Արէս) պարծանքն ու պատիւն եղող ճագուկներէն, իր ներկայ ասպարէզին մէջ ցոյց տուած անխոնջ և աննկուն աշխատասիրութեամբ ու անժխտելի արժանեօք իր պետութեան համակրանայ իրաւամբ արժանացած է, նոյնպէս իր բարի ու պատուաւոր վարքով բոլոր Իզմիրի հայ և օտարազգի հասարակութեան:

Աւելորդ չենք համարիր այս բարեպատեհ առթիւ մի քանի համակիր տողեր նուիրել իրեն, զինքը մօտէն ճանչցող իբր մտերիմ բարեկամ: Օհանեան էֆ. իր բազմապահանջ ու ամենէ փափուկ արհեստին անձնուէրներէն է, որով մեծ համբաւ կը վայելէ հեռագրական նրբին ասպարէզին մէջ. քաջ morsiste oreilliste (ակունջով հեռագիր տանող և hughiste (գաշնակի պէս թուշեր ունեցող և կապոյտ երկգներու վրայ տպագրական տառեր արտադրող հեռագրական մեքենայ մ'է) գործ մեծ յաջողութեամբ կը գործէ, տեսողին խորին հետաքրքրութիւնը չարժեքու՝ և սքանչալումը գրուելու աստիճանի կարելի չէ մարդ առանց հիացումի ապշած չմնայ, երբ այդ կարող հեռագրող իր Բերայի գծին morseի գլուխը անցած, և իր սո՛ւր ու արագալուր ակունջները լարած, իր հոգեշաղկապ Հայկին՝ կայծակի արագութեամբ գրած հեռագիրներն առնելու անհաւատալի շուտութիւնով որչափ դժուարահասկնալի լեզուով ալ խմբադրած ըլլան անոնք. Ի՞նչ մեծ և հիանալի հմտութիւն: Ամեն հեռագրիչի գործ չէ շիտակը, մենք հեռագրական ասպարէզին մէջ 15 երկա՛ր տարիներէ ի վեր ծառայելով, ու մեր արհեստին անարժանաբար քիչ շատ տեղեակ ըլլալով հանդերձ, միշտ անհուն հիացումով դիտած

ենք, Արտաշէս էֆ. ի բնածիր ընդունակութիւնը, միշտ մեր բարի նախանձը զրգուած է՝ վերջապէս այդ արուեստագիտական տաղանդը իր ճոխութեամբ ու պէսպիսութեամբ կը փայլի Արտաշէս էֆ. ի վրայ՝ բարեխնամ Տէրութեան ու Ազգիս պատիւ ու պարծանք ըլլալու չափ. մեր այս համակիր տողերը չափազանցութիւն կարծուի թերեւս. բայց ո՛չ, արհեստին մարդիկը կը հասկնան ու կը հաստատեն մեր յայտնածները՝ որ կատարեալ իրողութիւններ են:

Օհանեան էֆ. բնութեամբ ազնիւ, հեզահամբոյր ու պարկեշտ երիտասարդ մ'է: Եկեղեցին կը սիրէ ջերմ հաւատացեալի մը չափ, դպրոցը կրթական մշակի մը պէս, որուն մի փայլուն ապացոյցն է իր բնական՝ սիրական արուարձանին — Գարաթաշի — վարժարանաց հոգաբարձութեան անդամակցութիւնը, զոր կը վարէ խզճի մտքը բաւական տունէ ի վեր. իր կրթասիրական գովելի զգացմանց երկրորդ գործնական ապացոյցն է՝ աւելնով գրուած իր մէկ շահեկան յօդուածն զորս ասկէ առաջ լոյս տեսաւ Հանրագիտակի մէջ և զոր մենք հաճութեամբ կարդացինք: Քաղցր է մեզ յուսալ թէ՛ ասկէ յետոյ ալ բազմ պիտի ունենանք կարգաւ իր համով հոտով յօդուածներն: — Բաց յայտնել Արտաշէս էֆ. ջերմ ընթերցասէր մ'է, լրագիրը կը լսի ի սիրաւոր առարկաներն են: Մէկ բառով գրասէր մ'է: Մեր հայ հեռագրիչը հմուտ է հայերէնի, տաճկերէնի, գաղղիերէնի և անգլիերէնի իր պաշտօնակից ընկերները կրնան օրինակ առնել իր այս գովելի բարեմասնութիւններէն:

Իոկ Ազն. Օր. Եսպրճեան, հաղիւ ընթացաւարտ Իզմիրի Ամերիկեան վարժարանէն, մին է այն հայուհիներէն, որ իր ստացած խնամեալ լուրջ գաստիարակութիւնով, և նշանակիչ պարկեշտութիւնով, հայ իգական սեռին պատիւ ու փառք կը բերէ, և արդէն իր ներկայ ծաղկաւոր հասակէն իսկ ցոյց կու տայ տնաչէն տիպար տանտիկին մ'ըլլալու ամեն բարեմասն արժանիք և ազնիւ տրամադրութիւն: Գալով մեզ՝ խանդավառ խնդութեամբ ողջունելով այս արժանաւոր ու բարեղէտ նշանախօսութիւնը մեր օգտաշատ Հանրագիտակի հետ արտագին բարեմայլութեանց և

չնորհաւորութեանց երկներանգ համեմատ ծաղկեփունջ մը կապելով կը փութանք նուիրել իրենց պաշտելի վաստորի գեղածիծաղ ափունքէն սրու եղեմական հոգեգմայլ սրբաբայրերն ձօգուելով իրենց վրայ սէր և անսայթաք երանութիւն ափսոս, որուն ի սրտէ կը բաղձանք:

Բերա

ՀԱՅԿ ԹԱՅՔԵՍԷՆՆԱՆ

(Անշուք-խրճիթ)

Ի Տ Է Ա Լ Ը

ԿԱՐԵԼԻ Ե ԵՐԻՏԱՍԱՐԴԱՆԱԼ

Մի գարմանաք մեր այս խորագրին վրայ. վստահ զի գիտութիւնը իր ճամբան հարթած այլ ևս, իր սրագրն թաց խօլ թուշներուն մէջ, ամեն կողմ և ամեն բանի մէջ՝ նորութիւններ և հրաշքեր տրուելով կ'անցնի կ'երթայ: Մի գարմանաք, այլ սքանչացէք գիտութեան այս հրաշալիքներուն վրայ, որոնք ո՛չ գաղտնիք են այլ ևս ժողովուրդին համար, և ո՛չ ալ մոգական կամ թովջական անստույգ կամ կեղծ ու պատիւ հնարքներ:

Ո՞վ կը յուսար ասկէ դար մը յառաջ թէ՛ ի միջի այլոց, ելեկտրականութիւն կոչուած բնութեան մէկ անըմբռնելի՝ բայց ամենահզօր մէկ պաւակը, գիտութեան անդաբար կաթի ազգեցութեան տակ, և հրաշալիքներու անուպառ գանձ մը պիտի դառնար. և այսօր՝ դարերու բազմաբարդ խաւերուն տակ ծածկուած բոլոր անլուծելի միացած գաղտնիքներու բանալիները պիտի յանձնէր մարդկութեան ձեռքը: Բայց այս այսպէս է. և անուրանալի իրողութիւնն է. Ֆոանքլէն ամերիկացի մեծանուն գիտնականը՝ իրաւունքով զուրցած էր օր մը թէ՛ «Ելեքտրականութիւնը մանուկ է այսօր, վաղը պիտի մեծնայ անիկա, և չափահաս ըլլայ»:

Ֆոանքլէն՝ իր գուշակութեան մէջ չէր սիրարած: Դար մ'անցաւ այդ թուականէն ի վեր, և ահա Ֆոանքլէնի մանուկը հաղիւ էր

արտունքին մէջ, սկսած է արդէն սքանչա-
ցում տարածել ամբողջ աշխարհի մէջ:

Անցեալ օր՝ պատահութիւն ունեցանք
Տքէ. Բ. Զիլինկիրեան էֆ. Ի բնակարանը
այցելելու, ուր սքանչացումով գիտեցինք Ե-
ԼԵՔՏՐԱԲՈՒԺՈՒԹԵԱՆ վերաբերեալ հիանալի
գործիքները, որոնք ճարտար բժշկին ձե-
ռաց տակ խոնարհած, հլու զիցանայչի մը
պէս կեանք կը բաշխէին 14 տարեկան ջը-
լախառու տղեկի մը, որու ոտքերը գրեթէ
անգամաւորեալ վիճակի մը մատնուած էին:

Այդ միջոցին էր որ սքանչացումով յա-
փըշտակուած, սեզանին վրայ դրուած բը-
ժշկական «Սըմէն Մէտիքալ» անուն թերթի
կը թղթատէի, յանկարծ տկնարկս հանդի-
պեցաւ տարօրինակ խորագրի մը, «peut on
rajeunir — «Կարելի է՞ երիտասարդանալ», և
հետաքրքրութեամբ՝ յօդուածը ուղիւ ան-
ցուցի, ուր գոհացում գտնալ կ'սպասէի, դու-
րերէ ի վեր մարդկութեան այդ ամենամեծ
տենչանքին:

Անհաւանական տարօրինակութիւն մը պի-
տի թուի անշուշտ ձեզ այս խորագիրը. և
պիտի կարծէք թէ, ամեն տարօրինակու-
թիւններու պէս այս ալ Եանքիներու աշխար-
հէն ծնունդ կ'առնու. բայց ոչ, աշխարհիս
ամենէն լուրջ և պաղարիւն ժողովուրդի
միջոցաւն դուրս կ'ելլէ այս անգամ այդ
տարօրինակ գիւտի ձայնը Անգլիայէն, և
իրաւունք կուտայ մեզ վարկեան մը հաւատալ
իր ճշմարտութեան:

Յօդուածին կարեւորութիւնը և չափեկա-
նութիւնը ի նկատի առնելով, փափաքեցանք
Հանրագիտակի ընթերցողներն ալ անմասն
չի թողուլ, և մեր խնդրանոց համաձայն՝
Մեծարգոյ Տքթիօնը հաճեցաւ թարգմանա-
բար հաղորդել զայն, որ պիտի հրատարա-
կուի Հանրագիտակի յառաջիկայ թւոյն մէջ:

ԽՈՇԱՆՈՑԻ ԲԱԺԻՆԸ

ՃԵՐՄԱԿ ԽՈՐԻԾ (ՌՈՒ ՊԼԱՆ)

Տապակի մը մէջ դրէք քիչ մը կարագ
և հալեցուցէք, և 2—3 դգալ ճերմակ ա-

լիւր աւելցնելով բոհեցէք. երբ, աղէկ
մը իրար խառնուին, տապակը դրէք տաք
մսիկըին վրայ, և ժամու մը չափ թո-
ղուցէք, մերթ ընդ մերթ խառնելով
այսպէս՝ առանց գոյնը փոխելու կ'եփի:

Այս խորիծը կը գործածուի ընդհան-
րապէս՝ ճերմակ, գերմանական և պէշա-
մելի թացաններու մէջ:

ԿԱՐՄԻՐ ԽՈՐԻԾ (ՌՈՒ ՊԼԱՆ)

Վերցիչեալ կերպով պատրաստեցէք
ձեր խորիծը. բայց միայն քիչ մ'աւելի
թոպուցէք կրակին վրայ որ կարմրի:

Այս ալ կը գործածուի սպանիական
և թուի թացաններու մէջ:

Կրնաք այս խորիծը առաջուց պատրաս-
տել և դաշխուրանի մը մէջ դնելով, պա-
հել, ու պէտք եղած ատեն գործածել:

ԹԱԽՇՈՒՆ ԿԱՐՃԵՐՄԱԿ ԹՍՑԱՆ

Տապակը կարագով իւղոտեցէք. մէկ
երկու կտոր անճարպ զստապոխտ (ժամ-
պոն), հարթի ընկուզակ մը (հարթի ուսի
երկու ոսկրներու մէջտեղ գտնուած նրբա-
համ միսը) 2—3 ստեպլին, 1—2 սոխ, ա-
ղառգեղ, և այնքան մսի ջուր որ այս ա-
մենը ծածկէ. պէտք չէ սակայն որ մսի
ջուրը գունաւորըլայ, այսինքն լոլիկ են.
գտնուելու չէ իր մէջ: Ուժով կրակի
վրայ դրէք ու երեսէն փրփուրը առէք,
չափաւորեցէք այժմ կրակը ու երբ մի-
սերը եփին, հանեցէք մէջէն ու ցոմքե-
ցուցէք: Յետոյ սանը կրկին դրէք կրա-
կին վրայ, և առաջուց պատրաստուած
ճերմակ խորիծը մէջը խառնեցէք աղէկ
մը: Մէկուկէս ժամ եփեցէք, և աւել-
ցուցէք քիչ մը թանձրացած մսի ջուր (*)
և քիչ մ'ալ սունկ: Երբ այս թացանը
թանձրանայ պէտք եղածին չափ, երե-
սէն եղը կ'առնեն, և գգալով հոսեցնե-
լով (գգալով վեր առնել և կրկին ամա-
նին մէջ լեցնել) կը պաղեցնեն: Յետոյ
դաշխուրանի (կիւզէճ) մը մէջ դնելով կը

(*) Թանձրացեալ մսի ջուրը կը պատ-

պահեն պէտք եղած առանձին գործածելու համար։ Այս թացանը կը գործածուի ձուկի, հաւի, ոչխարի և գառնուկի մը սերու համար։

ԻՏԱԼԱԿԱՆ ԹՈՒԽ ԹԱՅԱՆ

Տրճակ (աէմէթ) մը աղաաղեղ առնելով խիստ մանր ջարդեցէք, 1—2 հատ էշալոդ (եգիպտական մանր սօխ մը) եւ քանի մը հատ սունկ. դրէք այս ամէնը սանի մը մէջ, աւելցուցէք մէկ դաւաթ ճերմակ դինի, և կրակին վրայ դրէք։ Երբ ջուրը քաշելով գոնդողի (բէլլութէն-միշ ԵՂՄԱՆ) աւելցուցէք 3 դգալ սպառնական թացան (Տես. Հանրգ. Թիւ 47) և պէտք եղածին չափ աղ պղպեղ։ Գործածած առանձինք քիչ մը կարագ դրէք ձեր թացանին մէջ, և դգալով աղէկ մը խառնեցէք որ պաղի։

ԻՏԱԼԱԿԱՆ ՃԵՐՄԱԿ ԹԱՅԱՆ

Պատրաստեցէք վերոյիշեալ թացանին ման, միայն սպանիականին տեղ պէտք է աւելցնել թաւշուն թացան։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԹԱՅԱՆ

Ձեր պատրաստելիք թացանի քանակութեան համեմատ կարագ դրէք սանի մը մէջ ու հալեցուցէք. աւելցուցէք ըն-

րաստուի սապէս, առէք կէս օխա անճարպ կովի միս, մանրեցէք, աղաաղեղ, ստեպղին, սօխ, քանի մը կտոր չի հալած դմակ, կամ խոլի ճարպ, որուն վրայ կը յաւելուն կէս դաւաթ ջուր, մէկ քառորդ ժամ կ'եփեն, և երբ կ'սկսի սաղը առնել, այն առան քիչ մը աղ և կէս օխա եռացեալ ջուր կ'աւելցնեն և կ'եփեն 3 քառորդ ժամ ևս։ Յետոյ սեղմելով կամ ճնշելով ջուրը կ'առնեն. սօիկա կ'ըլլայ պարզ արդանակ։ Կրկին կ'եռացնեն այս ջուրը եւ «չուռուպ»ի աստիճան կը թանձրացնեն, որուն կ'ըսուի «թանձրացեալ միս ջուր» (բոնսոմէ)։

տիր ալիւր և ճերմակ խորիժ շինեցէք։ Թրջեցէք այդ խորիժը միս ջուրով և ճերմակ դինիով։ Փայտէ դգալով մը շարունակ խառնեցէք. մինչև որ եփելայ. յետոյ մէկ կողմ քաշեցէք, համեմեցէք աղով, կէս մշկընկոյզի աաշուկով և պղպեղի հատիկներով (սչ թէ փոշիացած)։ Կէս ժամու չափ քթքթացուցէք, և կրակէն քիչ մը ետ առէք, երբ եռացումը դադարի, խառնեցէք մէջը հալկիթի դեղնուց, կտոր մը կարագ և լիմոնի մը հիւթը։ Պարզուտէ անցուցէք. և տաք պահեցէք կրկանօթի մէջ (պէն մառի, տեսէք բացատրութիւնը Հան. նախորդ թիւերուն մէջ), մինչև գործածութեան ժամանակ։

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Ի գիմաց ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ կ'ստորագրէ մի միայն Տնօրէն-Խմբագրապետ Ղ. ԲՈԼԱԾ, որու դիմել պէտք է, առանց բացառութեան, թերթիս վերաբերեալ ամէն գործառնուած համար։

درعاليهده بفتح قوسنده اسكى ضبطيهده

۱۹ نومرولى دكانده «مجموعه علوم» غزتهسى

سر محررى (بولاد) افندى به

Ղ. Բոլատ Տնօրէն-Խմբագրապետ

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ»

19. Էսկի-Չապթիյէ, Պաղչէ-Գափու Սթամպոլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK,"

19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou, 19

Stamboul

ԱՐՏՕՆԱՏԷՐ Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ

Սկիզբը .— (Գործակալ) .— Ձեր յանձնա-
դարութիւնը կատարուած է, նամակ մը
կատանաք :

Մալկարա (Գործակալ) .— Նամակ
գրած էինք, որդեօք ձեռքերնիդ հասած չէ՞ :
ԻՐԵՆՑ ԲԱՃՆԵԳԻՆԸ ՁԻ ՎՃԱՐՈՂ ԲԱ-
ԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ .— Թերթիս տարեշրջանը
բոլորելու մէկ քանի թիւեր միայն մնացած
ըլլալով, կը խնդրուի որ բարեհաճիք ընդ
հուպ պարտքերնիդ զրկել խմբագրութեան
հասցէին :

Ա. Զ. Դ.

ԳԱՂ. ՀԱՅ. ԳՈՐԾՆ. ԳԻՏՈՒԹԵԱՆՑ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԱՐԱՆ

Գործ. Հ. ՍԻՄԵՈՆ ԵՐԱՄԵԱՆԻ

Սոյն բառգիրքը կը խօսի աշխարհիկ լեզուով եւ
գործնական ոճով բժշկութեան, Վերաբուժութեան,
Առողջաբանութեան, ճարտարարուեստից, Բնաբա-
նութեան, Փիմիայի, գեղերու. Բնական պատմու-
թեանց, Աստղաբանութեան, Երկրագործութեան եւ
այլ գիտութեանց վրայ :

Բոտ կարելոյն ամենայն խառն տարուած է բա-
ռերու ճշգրտութեան : Ընդարձակ բացատրութիւններ
կուտայ իւրաքանչիւր նիւթի վրայ, ի բաց առեալ ա-
մէնէն անգործածական նիւթերն. իսկ կարեւոր նիւ-
թոց վրայ լեզբով օգտակար տեղեկութիւնք անպա-
կաս են : Այս աշխատութիւնը որպէս զի յինքեան կա-
տարեալ ըլլայ, հեղինակը իրեն առաջնորդ բռնած է
շատ մը հանրագիտական եւրոպական լուսարաններ :
Գիտական բառերու մասին առաջնակարգ թի-
կունք եղած է այս գործիս Վ. Հ. Քաջունց Հանգ-
ճիտ ընդարձակ բնութիւն բառագիրքն, իսկ բուսոց մա-
սին Վ. Հ. Ալիշանի Հայ-բանին : Աւելորդ չէ համար-
ուած գիտելու նաեւ մասնաճիւղերու վրայ խստող գըր-
քերու օգնութեան :

Հեղինակը խնամք եւրոպական ընտիր գործերէ քա-
ղելով ամենէն գործնական եւ օգտակար գիտութիւններն
գտնող խմբագրած է մի հատորի մէջ՝ զարգարելով
ամէն ճիւղի վերաբերեալ գեղեցիկ պատկերներով :

Սոյն գործը պիտի յրաւայ 50 ութածալ թերթերու
մէջ, իւրաքանչիւր թերթի երկայնութիւնն է 24 հա-
րիւրդամագր, լայնք 16 հրմ. զրերն մանր եւ գիւր-
նթեան չի :

Իւրաքանչիւր թերթի բաժանորդագինն է 20 սան-
թիմ, ումողջ գիրքն 10 ֆրանք (— 1 ռուբլի, 2 տոլ-
ար) զոր կանխիկ ներփակեալ տոմսակաւ պէտք է փա-
փաքողն յղէ առ Տեղւթիւն Վենետիկի Միթի-
եան Տպագրատուն, ապահովագրեալ նամակաւ եկ-
կուղէ ընդունիլ թերթերը :

Թերթերն կը զրկուին հինգ հինգ իւրաքանչիւր
անգամ : Ռուսաստանի եւ Տաճկաստանի համար յայտ-
նի է թէ յառաջոյն է յանձնարարականաւ (recom-
mandé) զրկել. առ այս փափաքողն պէտք է 25 սան-
տիմ առել հաշուէ, որով բաժանորդագրոյն վրայ ա-
ւելցնէ ֆր. 2.50— (12.50 ֆր. — 5 ռբ. — 4 ու կէս
տոլար) : Վասն զի կըրտեան պատասխանատու չէՏե-
ղւթիւնը :

Տպագրութիւնը աւարտելէ վերջ բառգրքին գինն
պիտի բարձրանայ 15 ֆրանքի. բաց ի թղթատարի
ծախուց* :

* Վերագրեալ ազդի վրայ՝ Հանրագիտակի բոլոր
գործակալներու եւ Խաժանորդներու ուղարկութիւնը
կը հրաւերենք, եւ կը յանձնարարենք Վեր. Հ. Ս. Ե-
րամանի աչիս հմտայիւր եւ արդիւնաշատ գործը, որ ոչ
միայն ֆրանսագէտ հայերու, այլ մինչեւ իսկ ֆռան-
սերէն չգիտցող ամէն Հայ գրագէտի, բանասէրի եւ ըն-
թերցողի համար կարեւոր է, եւ անոնց չափ եւ
աւելի կրնան օգտուիլ այդ բառարանի ուղղութիւնէն.
քանի որ ամէն բառի առջեւ պիտի գտնան ընդարձակ
բացատրութիւններ, լուսաբանուած խնամատիպ պատ-
կերներով :

Ե. Խ.

ԵԹԷ ՈՏՔԻ ԿՈՇՏԵՐԷ
(ՆԱՍԸՐ) ԿԸ ՆԵՂՈՒԻՐ

Դիմեցէք առանց երկմտելու, Գում-
Գաիու Ջարիֆեան գեղարանը, ուր պի-
տի ստանաք 5 դահեկանի փոխարէն,
փոքրիկ սրուակի մը մէջ, Ա. Ջարիֆ-
եան էֆ.ի հնարած «հակակոչապին»
հեղուկը՝ բացատրութիւնով մէկաեղ :
Գաւառներէ ուղղներու կը զրկուի
թղթատարով :



Կ. ԵԱՎՐՈՒԵՍՆ ԵԻ Յ. ԻՍԱԳՈՒՎԵԱՆ
ԹԷՅԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ձինական, Հնդկական եւ ճարտնական
ամենաընտիր տեսակէ եղող արաագրու-
թիւնները պիտի գտնէք ապահովաբար
Երոյիշեալ պատուաւոր վաճառատան
մէջ անհամեմատ աժանութեամբ :

Գաւառներու համար, յանձնարարու-
թիւնները փութով եւ ճշգիւ կը կատա-
րուին :

Կեդրոնատեղին է, Կ. Պոլիս, Ճէլալ
Պէյ խանի տակ, թիւ 10. ույն վաճա-

աւտան ապրանքները ժողովուրդէն գը-
նահատուած ըլլալով. շատեր անոնց
կեղծը հրապարակ հանած են, ուստի
զգուշանալուն համար, վերոյիշեալ վա-
ճառանիչին տակ Կ. Եւփրուեան և Յ.
Խաղուեան ստորագրութիւնը փնտռե-
ցէք:

ՄԵՍ ՄԹԵՐԱՆՈՅ ԴԵՂՈՐԷՒՅ

Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԷ

Կ. ՊՈԼԻՍ, ՖԻՏՔԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ ԹԻԻ

Սոյն վաճառատուն պատրաստ է մատա-
կարարել մեծ ու փոքր քանակութեամբ,
ամեն տեսակ թարմ գեղորայք. վիրա-
բուժական գործիքներ. Անգղիական և
Գաղղ. պատրաստ գեղեր, գօնեակներ,
գինիներ և հանքային ջուրերու մեծ
մթերք մը յարմար գներով: Լ. Արսլան-
եան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկար
ատեն անձնական փորձառութիւններ
ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն
խնայեր իրենց յաճախողներն գոհացը-
ելու համար, մասնաւոր ուշադրութիւնը
կը հրաւիրենք դաւառաց համար որոնց
կը շրկեն գեղորայք, ամենայն արագու-
թեամբ, թարմ և մատչելի գներով:

Շատեր այնպէս կը հաւատան թէ
Պոլսոյ հրապարակին վրայ ՃՇՄԱՐԻՏ և
ԱՆԽԱՐԴԱԽ Մօռիւ ձկան իւղ չի գըտ-
նուիր. այս կարծիքը շատ սխալ է. պէտք
ունեցողները թող դիմեն Լ. Արսլանեան
և Ս. Էմիրզէ Տեարց Դեղորէից վաճա-
ռատունը, ֆընտղեան Խանի տակ թիւ
3 ուր պիտի գտնեն ուղղակի նորվէ-
կիայէն բերել տրուած ամենալնտիր
ձկան իւղի տեսակներ: Մեծաքանակ եւ
փոքրաքանակ վաճառումներ կ'ըլլան խիստ
գիւրամատչելի գիներով:

ՀԱՒԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ

ՎԱՅԵԼՁԱԶԱՐԴՈՒԹԵԱՆ ԲԱՅԻՆԻՆ

Ղ. ԲՈԼԱՏ

Խմբագրապետ Հանրագիտակ Հանդեսի

Թիւ 19 Էփր. Զապիէյէ

Կ. Պոլիս

Տէր.

Գնահատելով Ձեր հանրագում ձեռնարկը,
հաճեցէք զիս բաժանորդ արձանագրել թեր-
թիդ վայելչազարդութեան բաժինն
.

Ստորագրութիւն
(Ընթերցիչ)

198

Բնակութեան տեղ
Հասցէ

ԳՈՐԾԱԿԱԼԻ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Ասա-բազար — Ժտեփան էֆ. Սափրիչեան
Արաբիյի — Գ. Տէվէճեան էֆ.
Էրզրում — Եղ. էֆ. Տ. Ազարեան
Թեհրան — Կարապետ էֆ. Բարարեան
Իզմիր — Կարապետ էֆ. Մալէճանեան
Իզմիս — Արրահամ էֆ. Կ. Կուաճեան
Մալխարա — Վ. Մանուկ էֆ. Զօլաք
Խարբերդ — Խոսրով էֆ. Քէչիչեան
Թրեպրի. — Գալուստ էֆ. Գըլըճեան
Սրնոպ. — Յ. էֆ. Պետրոսեան

Կիրասոն. — Արմենակ էֆ. Սոմունճեան
Մարաշ — Արթ. Տ. Յովհաննէս քահանայ
Վարժապետեան
Մանչսք. — Յակոբ էֆ. Բոլատեան
Պանսրմա. — Արմենակ էֆ. Ս. Մսերեան
Պահակ էֆ. Էթմէքճեան
Ղվէփ էֆ. Տէր-Յովսէփեան
Կրտիչ էֆ. Էրկանեան
Հիւսար. — Արտաշէս էֆ. Հա

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորապէս

Մազրի-Դիւղ, Պողոս էֆ. Աղնաւորեանի խանութը:
Դատը-Դիւղ, Լեւոն էֆ. Զպուքճեան Դեղարանի խոնութը
Բերա, Դեժ Գառնիկ էֆ. Դիւլէրեափօղոյ